

## ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 6

1962

### ՀՐԱՄԱՆԻ ՀԱԿՈՅՑԱՆ

## ՍԻՄԵՈՆ ԱՐՃԻՇԵՑԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՆՐԱԿԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հայ արվեստի պատմության մեջ՝ համեմատաբար սուկավ լուսաբանման է՝ արժանացել Վասպուրականի մանրանկարչական դպրոցը:

Մի շարք երեկոն նկարիչների դորձիր դեռևս ծանոթ չեն մեր արվեստագիտներին և կարուտ են խորի ուսումնասիրման: Այս խմբի մեջ է մտնում նաև Սիմեոն մանրանկարիչը, որին բնդշանուր դժերով ներկայացնելու առաջին փորձն ենք կատարում:

Վասպուրականում Սիմեոնը մեղ հայտնի առաջին դեմքն է, որ պատկերել է թիմատիկ նկարներն իրենց ամբողջական և կանոնիկ դաստիլորվածությամբ: Անհնալով զեղարվեստական բարձր կուլտուրա և հարցերին յուրովի մոտենալու ձիրք, այսուղ նա սկզբնավորից հայ մանրանկարչության հետաքրքիր ձյուղերից մեկը: Սիմեոնի մոտ մենք հանդիպում ենք պատկերագրական մի շարք նոր ձեւերի, որոնք մեծ մասամբ ընդունվեցին հետագա նկարիչների կողմից: Բացի այդ, ժողովրդի ծոցից դուրս եկած նկարիչը կրոնական բնույթի թեմաներում անկեղծությամբ վերաբռնագրել է նաև իր շրջապատի նիստակացը, օգոտակուրծվող տարկաները, հաղուստները, որոնք շափականց արժեքությունը են տեղական սովորությունների և կենցաղի ուսումնասիրման համար: Երաժիշտվ, Սիմեոն Արճիշեցու աշխատանքները առանձին նշանակություն են ստանում թե՝ իրենց բարձր զեղարվեստական ու պատկերագրական ինքնառիւթյամբ և թե՝ աշխարհիկ մատիմուների. վերաբռնագրման ուշագրավ նմուշներով:

Սիմեոնը ստեղծագործել է XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբներին, թաղթերունյաց գավառի Արճիշ քաղաքում<sup>1</sup>: Մանր էր նրա ապրած ժամանակաշրջանը: Հայ և օտար աղբյուրները բաղմաթիվ նյութեր են հաղորդում մոնղոլական շրջանում հայ ժողովրդի կրած տառապանքների, զերիվարությունների ու հարկացին անտառի ծանր լծի մասին: Մեր հեղինակը իր ընդորինակած ու նկարագրդած զրեթե բոլոր ձեռադրերի հիշատակարաններում իր ժամանակը իրավացիորեն «դառն ու վշտաբեր» է անվանում, անշուշտ անձնագիր կրելով մոնղոլական տիրապետության արհամիկությունները: Այս բոլորի հանդերձ մշակութային դործունեությունը երկրում չի մարում: XIII դարի

<sup>1</sup> Մինչ այժմ մասնագիտական գրականության մեջ՝ Վասպուրականի մանրանկարչության դրացի անդրանիկ լավագույն արտադրությունը համարված է Մատենակարանի № 9423 ամեստայանը, ընդօրինակված 1332 թվականին: Այժմ այդ թվականը առաջ է քաշվում զրեթե կես զարդ, բնդշուալ մինչև 1288 թվականը, երբ ստեղծագործել է այդ դպրոցի մեղ ծանոթ ամենառաջին խօսքը՝ Սիմեոն Արճիշեցին:

կիսերին Հայաստանի հարավային շրջաններում նկատվում է որոշ աշխատժացում: Դա պայմանավորված էր մասամբ միջազգային տյն առևտրի հետ, որի ուղիները, կորելով վանա լճի հյուսիսային ափերը, Բուալիայի առևտրական քաղաքները կապում էին Բավրիզին:

Արձեշը, ինչպես Երզնկան, Խոյը, Խաթը, Մանազկերտը, դանվելով հիշյալ բանում առևտրական մայրուղու վրա, ակտիվ կերպով մասնակցում էր տնտեսական կարևոր նշանակություն ունեցող այս անցուղարձին: Մարկո Պոլոն (1271—1295) նկարագրելով Մեծ Հայաստանը, երեք խոշոր քաղաքներ է, նշում այնտեղ, որոնցից մեկը Արձեշն է<sup>2</sup>: Զովելիա Բարբարոն պրում է, որ դեռ այն ժամանակ (XV դար) քաղաքը պահել էր իր խոշոր նշանակությունը, և որ քաղաքի կենտրոնում կանգնեցված էր Զհանշահի մոր մահարձանը<sup>3</sup>:

Համաձայն ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տեղեկությունների, այդպիսի կենտրոններում եղել են արհեստների շուրջ 30 մասնակուղեր, ինչպես ուսկերչությունը, ներկարարությունը, դերձակությունը, պատկերահանությունը, կոշկակարությունը և այլն<sup>4</sup>: Արհեստավորները միավորված են եղել Համբարությունների մեջ, որոնց գոյությունը միջնադարյան հայկական քաղաքներում հաստատվում են արդեն քավարար փաստերով<sup>5</sup>:

Ստորև բերվող մի քանի փաստերը վկայում են, թե տնտեսական-կուլտուրական ինչպիսի շարժում էր սկսվել Արձեշի շրջանում: Այսպիս, XIV դարի 30-ական թվականներին ուն Սարգսի, Սեթի, Սիմեոնի և Թումայի պատվերով Արձեշում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ վերոհիշյալ անձնավորությունները մինչ այդ «... Եինեցին զսուրբ եկեղեցին» գտնում Առաքեալքս յարդար վաստակոց իւրեանց, ի պիութագարն Ականց, և եղին զգիրս Մաշտոց<sup>6</sup>: XIV դ. սկզբներին Արձեշեցի խոշա Խաչատուրը պատվիրել է մեկ ձեռագիր, որի հիշատակարանում խնդրում է հիշել նաև իր մորեզրայր՝ Հյուսն Կարապետին<sup>7</sup>: Աշխարհիկ անձնավորություն էր 1305 թ. Սիմեոնի ընդօրինակած ձեռագրի պատվիրատու իշխան Շնոփորը: 1285—1286 թթ. Քաջրերունյաց գավառում շինարարական մեծ աշխատանքներ է կտտարել գավառի տեսուչ Արքահամբ<sup>8</sup>:

Լայն թափ է ստանում նաև պրշտիյունը: 1288—1307 թթ. Արձեշում միաժամանակ սունդակործում էին մի քանի նկարիչներ<sup>9</sup>: Վասպուրականի տարբեր գավառներից այստեղ էին գալիս տիրապետելու գրչության և նկարչության արվեստին<sup>10</sup>: Հետագայում էլ այս քաղաքի հետ իրենց անունները կապեցին

2 Հ. Հակոբյան, Աւզեզրություններ, Հ. Ա., Երևան, 1932, էջ 48: Արձեշը ակնարկված է նաև արար ճանապարհորդ Արուելիքանի կողմից: Հ. Հակոբյան, նույնը, էջ 50:

3 Հ. Հակոբյան, նշված աշխատաթյունը, էջ 197:

4 Լ. Խաչիկյան, Ժե դարի Հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Բ, Երևան, 1958, էջ CXV:

5 Լ. Խաչիկյան, 1280 թվին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը» («Տեղեկագիր», 1951 թ. № 12, էջ 73—84):

6 Լ. Խաչիկյան, Ժե դարի Հայերն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 266:

7 Մատենադարան, ձեռ. № 4778, էջ 283ր:

8 Հ. Ռոկետն, Վասպուրական—Վանի գանքեր, Վիեննա, 1942, էջ 391:

9 Տե՛ս Մատենադարան, ձեռագրեր № № 4052, 778, 6387 և 4427:

10 Հայագիտության քաշատեղյակ Դանիել Սղմանարեցին և իր ուսումը ստացել Արձեշում:

Հովհաննես Մանգասարենցը՝ մեծավաստակ զբիչ, որը իր կյանքի ընթացքում ընդօրինակել է 132 տարրեր ձեռագրեր, Հովհաննես Արմենացին՝ Մեծոփառատի «պիտուն» և խմաստուն» ղեկավարը և բազմաթիվ այլ գործիչներ:

Սիմեոնը մեզ հայտնի է նախ և առաջ որպես զբիչ: Մեզ են հասել Արմենացին ընդօրինակված նրա ձեռագրերից շորոր:

Դրանք են. 1. Մատենադարան, ձեռ. № 4851. Ավետարան, ընդօրինակված 1288 թ., պատվիրատու՝ Թումա, 262 թերթ, թուղթ, 28×19 մետրիան, երկսյուն, բոլորագիր, կաշեպատ կազմ: Մանրանկարներ՝ էջ 1ր ծնոնդ, էջեր 7ր, 83ր, 128ր, 204ր ավետարանիչներ. էջ 2ր-7ա խորաններ: Զեռագիրը պահպանված է լավ վիճակով:

2. Մատենադարան, ձեռ. № 4867. Ավետարան, ընդօրինակված 1297 թ., 296 թերթ, թուղթ, 32×24 մետրիան, երկսյուն, բոլորագիր, կաշեպատ կազմ, մանրանկարներ՝ էջ 1ա-8ա (ոչ Սիմեոնի), 14ր Աստվածածինը մանուկը զբրկեն, խորաններ — էջ 9ր-14ա, լրիով պահպանված են շորս ավետարանիչները. անվանաթերթերը և լուսանցագարդերը: Հետարրքիր է, որ Սիմեոնը սկզբի 1ա-8ա էջերը ինչ որ պատճառով աղատ է թողել, որը ծաղկող Աստվածառուրի կողմից նկարադարձվել է ԺԵ դարում:

3. Մատենադարան, ձեռ. № 2744. Ավետարան, ընդօրինակված 1305 թ., սացող՝ Տէր-Սիմեոն, 301 թերթ, 30×29 մետրիան, կաշեպատ կազմ, մանրանկարներ՝ 1. Քրիստոսը կտէին բաղմած, 2. Բահակի զոհարերումը, 3. Ավետում, 4. Սնոնդ, 5. Մողերի երկրպագումը, 6. Մանուկը տաճարում, 7. Մկրտչություն, 8. Հիմանդների բուժումը, 9. Մատություն, 10. Պիղատոսի դատը, 11. Կաշելություն (նման հնագանդ ձեւերին՝ ոտքերի երկու մեխով), 12. Հարություն, 13. Համբարձում, 14. Ա. Հոգու դալուստը: Էրիվ են շորս ավետարանիչները, խորաններն ու անվանաթերթերը:

4. Մատենադարան, ձեռ. № 4819. Ավետարան, ընդօրինակված 1305 թ., 306 թերթ, թուղթ, 33,5×24,5 մետրիան, կաշեպատ կազմ: Զեռագրի սկզբի մասը բացակայում է (ահրաբ սկսվում է Մատթեոսի ավետարանի Աղխից), ուստի խորաններն ու տերունական նկարները շեն պահպանվել, առկա են վերջին երեք ավետարանիչների դիմանկարները:

Բոլոր հիշատակարանների տվյալներով ձեռագրերը ընդօրինակված են Սիմեոն զբչի կողմից: Մանրանկարչի (ծաղկուդի) մասին ոչինչ չի ասված, բայց կան անտարակուսնի փաստեր այն մասին, որ մանրանկարները են պատկանում են Սիմեոնին: Խնդիրը հիմնականում պարզվում է, եթե ընթերցում ենք խորաններում պահպանված հիշատակագրությունները (զբանք դիմին, կարմիր, կապույտ գույներով են, միաժամանակ նմանեցված արմավենու տերևագարդերի) — «Ռումին», Թումա վարդապետ և իւր ծնաւղին Ստեփանոսի և եղիկելի զրշի Սիմեոնի և խրոցն»<sup>11</sup>, «Ռումին» ստացողաց զրոցս, զրողաց և հիշողաց, ամէնս»<sup>12</sup>, «Տէր Յիսուս ողորմէա գծողին և ստացողին»<sup>13</sup>: Մատենադարանի № 4851 ձեռագրի նախավերջին խորանի մեջ (էջ 10ա), Համբարձուրատի թվերի փոխարեն զրված է.

<sup>11</sup> Մատենադարան, ձեռ. № 4851, էջ 3ր:

<sup>12</sup> Մատենադարան, ձեռ. № 4867, էջ 13ր:

<sup>13</sup> Մատենադարան, ձեռ. № 4851, էջ 4ր—5ա:

օն: այս է վաստակ մասանց տարատմ զրշի  
Սիմեոն Եղեգնաղծի  
Եւ ձեզ ի վայելս յուկտ լիցի  
Եւ կաթ ազաթից ձերոց ցաւղիացի  
Ինձ ի դուռն դերեղմանի,  
Որում լիցուր ձեւք արժանի  
Յանդէու երեսացն Քրիստոսի  
Յարքայական տեղ հանդիսի,  
Որք քրիստոնեանք են ի կարգի»:

Բերված հիշատակադրությունները, որ արօնած են նկարներին առընթեր Սիմեոն զրշի կողմից, իրավունք են տալիս ևնթագրելու, որ նկարագրումները ևս պատկանում են Նրան: Եթե ծաղկուր մեկ ուրիշը լիներ, ապա անհնարին է, որ նա որիէ կերպ չհիշվեր. մանավանդ ընդարձակ հիշատակարաններում հանվանե հիշատակիված են ձեռապերերի հետ առնչվող բոլոր անձինք:

Սիմեոնին աշակերտած Դանիել Աղթամարցին գրել է. «Դարձեալ կրկին աղաշիմ և զուսուցիչն իմ զԱլիմէոն պատուական քահանայն, որ ի բազում արուեստից իւրոց զսակաւ գիրս մեզ ուսուց»<sup>14</sup>: Այս վկայությունը ևս հաստատում է, որ Սիմեոնը բացի զրիշ լինելուց տիրուպիտել է նաև «քաղաքամ» արվեստների, որոնցից մեկն անպայման մտներանկարչությունն է Եղել:

Սիմեոնի կյանքի ժաման մեզ հասած տեղեկությունները սակավ են: Գիտենք, որ ասլրել է Արձեշում, եղել է քահանա: 1312 թվականին նա արդեն մահացած էր: Այդ թվականին շարադրած իր մի հիշատակարանում Դանիել Աղթամարցին գրում է. «Բարեխաւս լերուր... նաև ուսուցին մերոյ պատուական և ընտրեալ քահանային Սիմեոնի՝ փոխեցելոյն ի Քրիստոս»<sup>15</sup>:

Սիմեոնին աշակերտել է նաև արձիշեցի Դեռսկորոս զրիշը. «և զիմ անարժանութիւնս լիշելոյ արժանի առնէիր ի տէր զամենամեղ զրիշս, և զմեր ծնողսն, և զերախտաւորն մեր և զուսուցիչն զԱլիմէոն քահանայ...»—դրել է նա իր մի հիշատակարանում<sup>16</sup>:

### Սիմեոն Արքիշեցու սակագուշություններ

Սիմեոնի աշխատանքները՝ խորանների ընդհանուր պարզ ձևավորումով և պատկերների դուստ անմիջականությամբ զասվում են ազգացին հնավանդ սովորությունները պահպանած ձևագրերի այն խմբին, որոնց լավագույն նմուշներից են Մատենադարանի № 6201 (բնդօրինակիված 1038 թվականին), №№ 974 և 3784 (XII դ.) № 3756 (ԺԲ դար), № 4819 (1294 թ.) և № 3727 (1304 թ.) նկարագրդ ավետարանները: Արանց հասում է մահովենապայտթյուն և կատարողական՝ ակվարելացին-պրաֆեկտական ընույթ:

Ի տարրերաւթյուն նախորդ հեղինակների, Արձիշեցու մուռ զգալի տեղ են դրավել կենցաղային մուտքինները: Դեռևս XII դարից հայ միջնադարյան ար-

14 Լ. Խ ա շ ի կ լ ա ն, ԺԴ զ ա ր ի Շ ա յ ե ր ե ն ձ ե ս ո գ ր ե ր ի հ ի շ ա տ ա կ ա ր ա ն ն ե ր, է շ 14:

15 Նույն անդամ, է շ 86:

16 Նույն անդամ, է շ 266:



Նկ. 1.  
Հիսուսի հրաշագործությունը

վեստի տարբեր բնագավառներում նկատվում են նոր ուշագրավ երևոյթներ։ Տիրապետող կրոնական աշխարհայացքը ձեղքեր է տալիս, և աշխարհիկ կյանքի տարրերը։ Հախուռն կերպով ձգտում են ճանապարհ Հարթել իրենց համար եկեղեցու դադափարական հոկոզության տակ գոնվող գրականության և արվեստի մեջ։ Մեր մանրանկարչության մեջ այս նոր ուղղության դադափարական աղղեցությունը մեծապես կրում է իր վրա Սիմեոն Արծիշեցին։

Հարազատ է արված բնության պատկերը նրա մոտ։ Յուրաքանչյուր նկարագարդ է զի է ծառ ու ծաղիկների նմուշներով, որոնք մեծ ժամանք տունց ոճավորման ու ձևափոխությունների են. պատկերված են այնպես, ինչպես դրանք կան իրականում մանրանկարչի հայրենի բնաշխարհի ծաղկաշատ լեռներում ու հովիտներում։ Մատենադարանի № 2744 (1305 թ.) ավետարանու այդ տեսակետից Սիմեոնի լավագույն ստեղծագործությունն է։ Այն կարող է գրվել թարմ բուսական պատկերներով հարուստ կիլիկյան երեսի ձեռագրերի կողքին։ Վարդերը, շուշանները, նոնենիները, բացի խորաններից զարդարում են նաև թիմատիկ նկարներով զբաղեցված գրեթե բոլոր էջերը (Մատենադարան, ձեռ. № 2744, էջ 1ր, 2ր, 4ր, 5ա, ձեռ. № 4867, էջ 9ր, 11ա, 11ր, 12ա)։ Նկարիչը կարծեք ցանկացել է ավետարանական-տռասպելական զետքերը տեսնել իրականության մեջ, պարունակել դրանք ոեալ զեղեցկությամբ։

Ծննդյան տեսարանը այս ձեռագրում (էջ 3ա) ուշագրավ է ժողովրդի չքավոր դասի ներկայացուցիչների՝ հովիտների նկարման պարզ ու գորովալից ընույթով։ Եթե կրոնական կերպարների ժամանակ հեղինակը մասնակի ուշադրությունը չի դարձնում մանրուրների վրա (Ճիշտ շարժումները, ձեռը), և հաճախ բավարարվում է դրանց միայն ընդհանուր պատկերմամբ, ապա այլ է մերարկմունքը զետի աշխարհիկ մարդիկ, նրանց գործունեությունը, տարագը, կեցվածքը։ Այստեղ, ուղղակի ազդագրագետի հետաքրքրությունն է դրսեորդում։ Մենք տեսնում ենք վասպուրականի զյուղացիներին, բնորոշ գեմքերով։ Հագած մինչև ծնկները հասնող պատմուճաններ, որոնց ընդարձակ փեշերը առջեց քղանցքներ ունեն։ Արածայր կոշիկները, «փափախները» և նեղ զարդարուն անդրավարտիքները տիպիկ են լեռնային ժողովուրդներին<sup>17</sup>։ Մերունի հովիվը կանգնել է վերին անկյունում։ Նրա հագի մորթե զգեստները մեզ ծանթ են վասպուրականի տարագների լուսանկարներից<sup>18</sup>։

Առավել հետաքրքիր են զյուղացիները հիվանդների բուժումը պատկերող տեսարանում (էջ 4ր: Տե՛ս նկ. 1)։ Երկու երիտասարդներ՝ թուխ ու խոժոռ զեմքերով, հրաշագործ Քրիստոսին են մոտեցնում մահմերծի պատզարակը։ Եթե դուռուց վեր զդեստները ամուր հագած են աշխատանքի սովոր սամիկների շլու մարմիններին, ապա ցածի մասում դրանք բավականին ազատ ու զեղե-

<sup>17</sup> Ի. Հացովանին մի շարք հուշարձանների և մանրանկարների համեմատությամբ գտնում է, որ նեղ թեերով, ոչ երկար պատմուճանները, որոնք առջեց քղանցք ունեն, տարածված են հեղեղ հատկապես վասպուրականցիների մոտ. «Դրանք, — զրում է նա, — հետի են բիւզանդականներ» (Պատմություն հին Հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 188)։

<sup>18</sup> Տե՛ս Ա. Խաչատրյան, Վասպուրական, 1911, էջ 18—20։ Ս. Լիսիցյան, Старинные пляски и театральные представления армянского народа, Ереван, 1958, աղ. 24։ Առետրական և արհեստագործական նշանակալից կենտրոններում ճոները իրենք մշակում, ձևում են կարում էին մորթե հագուստներ (Ա. Խաչատրյան, Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը, Երանքեր, 3, էջ 78)։ Օրինակ, Արձեշում ապրել է ունե Աստվածատուր, որը զբաղվել է մորթե հագուստներ կարելով ու վաճառելով (Կ. Գանձակեցի, Պատմություն, 1865, էջ 91)։

ցիկ ծալքազարդերով իշխում են մինչև ծնկները. նկատելի են լայն բղանցքներ:

Երիտասարդները զլխարաց են, հավանաբար սղավոր լինելով զլխարկ չեն ծածկել: Պարզ երևում են ցածից առամնավոր մետաղյա գոտիները, որոնց սպազործումը ժամանակին ընդունված սովորույթ է եղել<sup>19</sup>: Մեր պատմիչները տեղեկացնում են, որ Հայ թագավորներն ու իշխանները ունեցել են այդպիսի զոտիներ, որոնք սակայն ականակուռ էին ու զարդարուն, այդպիսի զոտիներով են փորազրված Սահակ և Համազասպ Արծրունիների պատկերները Աղթամարի տաճարի որմին:

Հրաշագործությունները պատկերող թեման ուշագրավ է: նաև մեկ ուրիշ հետաքրքրական կողմով: Մահամերձին դեպի Հիսուսը տանող թափորի մեջ տեսնում ենք երկու կիսամերկ մարդկանց, որոնք քայլում են ուրագին շարժումներ կատարելով: Պատղարակի առջևից զնում է մի տղամարդ, հետեւց՝ մի կին: Բնորոշ է կնոջ պատկերը. նա իր շրջազդեստի վերին մասը իշեցրել է: մինչև զոտկատեղը և հագուստի թեմբով այն կապել մհջրին: Դրանք, իհարկե, մահամերձի ծնողները չեն (նա հայր չուներ): Ենթադրվում է, որ այս դեպրում մենք զործ ունենք վարձիող ողբասացների հետ: Հայտնի է, որ միջնադարյան կենցաղում գենես պահպանվել էին հեթանոսական շրջանից եկող նման սովորութները<sup>20</sup>: XIII դ. հեղինակ Կոստանդին Բարձրերդցին իր «Խրատական թղթի» ժթ կանոնով պատմիրում է մեռելների վրա շկատարել հեթանոսական ծեսեր, «ի վերաց մեռելոյ մազ մի կտրեսցեն, և սեաւ մի արասցեն, և զերես մի կեղերեսցեն և զձես և լալկան մի վարձեսցեն...»<sup>21</sup>: Բազմաթիվ են այս սովորութների դեմ ուղղված կետերը հայոց կանոնադրում<sup>22</sup>:

Չնայած պաշտոնական եկեղեցու համառ պայքարին, հնավանդ սովորութները այնուամենայնիվ պահպանվում էին ժողովրդի կենցաղում: Այս մանրանկարում ևս հուղարկավորության հեթանոսական հեամենի ծեսի իրական պատկերն է վերաբարեկ Սիմեոն Արձիշեցին:

Առանձին նշանակություն է ձեռք բերում ողբասաց տղամարդու հարցը: Գրականության մեջ կան տարրեր կարծիքներ ձայնարկու-ողբասացների մասին. արդյո՞ք միայն կանայք, թէ՝ տղամարդիկ ևս մասնակցել են այդ ծեսերին: Երբեմն ձայնարկուները նույնացվել են լալկան կանանց հետ<sup>23</sup>. բայց կան և հակառակ մեկնարանություններ: Օրինակ, Հայկազյան բառարանում ձալնարկու բառը բացատրվում է այսպիս: «Գուսան, լալկան թէ այս և թէ կին, որ ցաւագին ձայն բարձեալ գոշէ»<sup>24</sup>: Գ. Գոյանը նույնպես ենթադրում է, որ թաղման հիշյալ ծիսակատարություններին մասնակցել են նաև տղամարդիկ<sup>25</sup>: Ազ-

<sup>19</sup> Միջնադարյան Հայուստանում զոտին համարվել է ամենից ավելի վաճառված և զնուող ապրանքներից մեկը:

<sup>20</sup> Թռված ա. Ա. Բ. Ժ. Ռ. Ռ. Ռ. Ռ. ի. Պատմություն, էջ 267: Գ. Ն. Ա. Բ. կ. ա. ց. ի. Պատման սղբերգության, բանք 26 և 68:

<sup>21</sup> Լ. Խ. ա. շ. ի. կ. յ. ա. ն. Կոստանդին Բարձրերդցու երատական թուղթը, «Բանքեր», 4, էջ 277:

<sup>22</sup> Ա. Ղ. ա. ձ. կ. ա. ն. Կանոնգիրը հայոց, Թիֆլիս, 1913, էջ 10, 68, 69:

<sup>23</sup> Ս. Մալխաս այանց, Հայերեն բացատրական բառարան, 3, էջ 159 («լաց ու սղբի ձայներ արձակող (կին), լալկան կին»):

<sup>24</sup> Բազիրը Հայկազյան լեզվի, Վենետիկ, 1846, 2, էջ 136:

<sup>25</sup> Գեօրգ Գոյս, 2.000 լեռ Արմանուց առաջ, 1, Մոսկվա, 1952, էջ 281—293:

զագրական տվյալներով մինչև վերջին ժամանակներս էլ Հայաստանի տարրեր շրջաններում եղել են վարձկան գուսաններ, որոնք թաղումների ժամանակ ծիսական երգեր են՝ ասել<sup>26</sup>: Գրական պատմական փաստերից առավել հետաքրքիր է Բուղանդի վկայությունը. Հուղարկավորությունների թափորր նկարագրելիս նա գրում է. «... յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդոր և մնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիզմն հատեալս, զերեսս պատառեալս, արբ և կանայք պղծութեամբ ճիւղութեամբ պարուք գէմ ընդ գէմ հարկանելով և կամ ծափս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին»<sup>27</sup>:

Այսուեղ կարեոր է, որ ծիսակատարության մեջ տեսնում ենք տղամարդուն, ինչպես զա պատկերված է Սիմեոնի մոտ: Վերջինիս աշխատանքը նկարչության մեջ մեղ հայտնի տուաշին փաստերից է, ուր հանդիս է գալիս տղամարդայնարկուն: Սիմեոնից հետո Վասպուրականի նկարիչները հաճախ են անդրադարձել այս թիմային: Օրինակ Զաքարիա «Փիլիսոփա» կոչված մանրանկարիչը (Աղթամար, 1354—1403 թթ.) իր նկարագրության մեջ նկարու ձեռագրերուն (Մատենադարան, ձեռ. № № 5347, էջ 4ա և 4923, էջ 4ր) լուլկան կանանց հետ պատկերել է նաև ծայնարկու տղամարդին: Ըստ որում, այդուեղ պահպանված են Սիմեոնի օգտագործած սխմմաները:

Գևոսպիրի 5ր էջում գտնվում է «Հարության» նկարը: Վեճին նստած Յրեշտակի աջ կողմում կանգնել է Հիսուսը, որը սովորաբար այդ տեսարանում բացակայում է: Տիյալ օրինակը պատկերագրության մեջ սակայն հանդիպող տարրերակներից է և ունի հին ծագում<sup>28</sup>:

Բայց այսուեղ մեղ համար առավել կարենոր բոնցքաշափից քիչ մեծ, կոնաձև քերան և հատակ ունեցող յուղամաններն են, որ կանայք բռնել են ձեռքերին: Դրանք հիշեցնում են հնագիտական պեղումներից հայտնաբերված նշանավոր «սնդկամանները», տարրերությամբ, որ մեր օրինակները ավելի երկարավուն ձև ունեն: Այդ տիպի անոթների ծադման և նշանակության որոշման հարցը երկար ժամանակ վիճելիք է եղել. հայտնվել են ամենատարբեր կարծիքներ: Բայց միայն վերջին ուսումնասիրություններում մասնագետները հանդեցին այն եղբակացության, որ գրանք ունեցել են կենցաղային նշանակություն և ծառայել են ցնդող հեղուկների, դեղերի ու անուշաբույր յուղերի համար<sup>29</sup>: Մանրանկարում կարեորն այն է, որ վերջիններս տրված են իրենց կռնկրիտ զարծածության մեջ, որպես յուղամաններ<sup>30</sup>: Դժբախտաբար Սիմեոնին հաջորդած նկարիչների մոտ յուղամանների այս ձևերը չպահպանվեցին:

26 «Թիգրակն», 1899, լ. 803:

27 Փաւառափ Բուղանգացոյ Պատմության հայոց, Անեստիկ, 1914, էջ 290:

28 Հարության տեսարանը այսուեղ տրված է բայ Մարկոսի ամեսարանի մշ. զիմի:

29 Հ. Մարք. Անն. 1910, էջ 147—167: Ի. Օբելի, Կատալոգ Անիսկոց մշակույթի պահպանական հանդիպությունների, 1911, էջ 49: Ա. Ղաֆար արքան, Գյին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 204—207: Ա. Միացյալ անդամներ, Հայկական գարդարվեստ, Երևան, 1955, էջ 73—74: Առանձին ուսումնամիջություն է գրել Հ. Զանիգովադյանը (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, 3, 1950, էջ 73—74): Ամփոփելով մինչ այդ եղած բոլոր նյութերը, հեղինակը հիմնավորում է, որ «սնդկամանները» ունեցել են կենցաղային նշանակություն, որոնց մեջ լցվել են օժանելիքներ ու յուղեր:

30 Հետաքրքիր է թղթես նորագանքի որմեաբանդակներից մեկը, ուր պատկերված են յուղարեր կանայք: Կանանցից մեկը ձեռքին բռնել է մեղ հետաքրքրող ձեխ մի անոթ: Այս յուղարեր կանայքը կանանցից մեկը ձեռքին բռնել է մեղ հետաքրքրող ձեխ մի անոթ:

Հնտաքրքրություն են առաջացնում նաև գործածության մյուս առարկաները՝ հագուստները, գործիքները և կենցաղային իրերը։ Նկարիչը խոսափելով սովորական դարձած նմուշների կրկնությունից, զանում է ավանդական տեսարանների պատկերման մեջ ներմուծել կենցաղային ու տեղական մոտիվներ։ Օրինակ, հաճախ կարելի է տեսնել փարշի նմանվող հասարակ կանքե ճրագամմաններ, որոնցից շատ են գտնվել պեղումների ժամանակ։ տարրեր ձևերի կամբց թանաքամաններ, փայտյա աթոռներ և այլն։

Հեղինակը մի տեսակ հավասար վերաբերմունք է ցուցաբերում պատկերվող անձանց նկատմամբ, լինի դա աստված, թե սովորական մահկանացու, բոլորին նա տրամադրում է միանման իրեր։ Նույնիսկ աստվածամոր դիմանկարում (ձեռ. № 4867, էջ 14ր), ուր սովորաբար շքեղ թիկնաթոռներ են լինում, Սիմեոնի մոտ հասարակ փայտե նստարան է։ Նստարանների վրա տեսնում ենք բարձեր, դա մի սովորություն է, որը ընդունված է եղել արևելյան ժողովուրդների մոտ։

Անոթների և մյուս առարկաների դարդերը նույնաձև, երկու գուգահեռ գծերով կազմված գոտիներ են, որոնք ուղղահայաց դրոշմներով միացվում են իրար։ Դրանք մեզ հիշեցնում են միջնադարյան կարստների վրայի զարդամուտիվները<sup>31</sup>։ Թեև այդ մոտիվները օգտագործված են կրոնական սյուժեներին պատկանող առարկաների վրա (զոհասեղանը, մողերի կողմից մատուցվող նվերները, սպոնդի կաթսանները, յուղամանները «Հարության» տեսարանում), բայց ըստ էության, դրանք արտացոլում են հասարակության աշխատավոր խավերի՝ արհեստավորների ու գյուղացիների շրջանում տարածված գործիքներն ու առարկաները, նրանց կենցաղային իրերի զարդարանքները։

Գրիշների ու ծաղկողների աշխատաձեւերի ուսումնասիրման համար հարուստ նյութ են մատակարարում ավետարանիշների դիմանկարները։ Հանրահայտ է, որ տարրեր կենտրոններում եղել են արհեստանոցային տարրեր պայմաններ։ Այսպես, Վասպուրականում տարածված էին կախովի փոքրիկ տախտակ-սեղաններ, որոնք և վերագտադրվել են ներկա ձեռագրերում (Մատենադարանի № 4851 ձեռադիրը, բնդորինակված 1288 թ., մեզ հայտնի առաջին նմուշն է)։

Դժբախտաբար դրանք շատ սինմատիկ են գծված, ուստի կարելի է միայն ներազրել, որ Սիմեոնը ցանկացել է պատկերել զրամկալների այն տեսակը,

Պամանը մեծ ընդհանրություն ունի Անիի և Դիլինի սկզբանների ժամանակ հայտնարկված, այսպես կոչված «սնդկամանների հետ, և ըստ կության վավերագիր է հանդիսանում այդ անոթների օգտագործման այնքան առեղծվածային հարցի պարզաբանման դործում», — գրում է Ս. Մնացականյանը իր «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» աշխատաթյան մեջ, Երևան, 1960, էջ 235։

<sup>31</sup> Նման դրոշմազարդերի ծագման և ժամանակի մասին կան տարրեր կարծիքներ (Բ. Շելկովնիկով, Խудожественная керамика Двинских раскопок, «Տեղեկադիր», 1940 թ., № 4—5, էջ 181—199); Գ. Չубинов, Отчет Анийского Музея Древностей за 1916 год, 1918 (էջ 19—20), իրը արդ ձեւերը սկիզբ են առնում ԺԲ—ԺԳ դարերից; Բայց վերջին ուսումնասիրություններում դրանց սկիզբը հասցվեց Թ դարը (Կ. Դաֆտարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 193—197; Բ. Առաքելյան, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում Թ—ԺԳ դդ., Երևան, 1958, էջ 226—227)։

երը երկու քառանկյուն տախտակներ, երկայնական կողերով (մոտ 100 աստիճան բթանկյունով) փակցվում էին միմյանց<sup>32:</sup>

Գրակալը, լուսավորությունն ապահովելու համար, պարանով կախել են երդիկից<sup>33:</sup> Նստելով աթոռին, գրիշը ծնկներին է մոտեցրել «շարժոն սեղանը» և աշխատել. Մարկոսի դիմանկարներում, որ նա պատկերված է ոչ անմիջապես ընդօրինակողի դիրքով, այդ «սեղանները» նկարված են բարձր՝ ձեռքից հեռու. Այս մոմենտը ցուց է տալիս, որ առաստաղից ամրացվող հիմնական լարերը եղել են շարժոն կամ զապանակաձև. աշխատելու ժամանակ գրանք հարմար շափով իջեցվել են ցած, գործը վերջացնելուց հետո, կամ ընդմիջումներին՝ ձգմել վեր:

Բերված օրինակներով չեն սահմանափակվում Արձիշեցու ձեռագրերի աշխարհիկ ու կենցաղային մոտիվները. Դրանց թվին պետք է դասել նվերներ բերող մոգերին. ոչազբավ է նրանց իշխանական տարազը. «Մատնության» տեսարանում (էջ 5ա) զինվորների հագուստներն ու հանդերձանքը, Պիղատոսի զիսի փաթույթի յուրօրինակ ձեր, «Հրաշագործությունների» պահին դյուղացիների դիրքն ու տարազը, որոնք զետի Հիսուսն են իշեցնում մահիմի մեջ գըմած հիմանդին և այլն<sup>34:</sup>

#### Պատկերագրական և կատարողական մի տանի առանձնահատկություններ

Սիմեոն Արձիշեցու մանրանկարները հարուստ են նաև պատկերագրական ինքնատիպությամբ: Այսաւել տեսնում ենք մի շաբթ սխնմաներ, որոնք այնուհետև կրկնվում են հաջորդների կողմից: Ուստի սկզբնական այդ օրինակների արձանագրումը կարելոր արժեք ունի վասպուրականի մանրանկարչության հետագա ուսումնասիրման համար:

Նախ՝ Իսահակի զոհարերման թեմայի հարցը: XI դարից հետո այդ թեման դուրս էր եկել պատկերագրությունից: Բայց այդ ընդհանուր երևույթի մեջ Վասպուրականը բացառություն կազմեց. զոհարերման թեման այստեղ շարունակվում է պահպանվել<sup>35:</sup>

Ներկա հոդվածի շրջանակների մեջ չեն մտնում Իսահակին զոհարերելու վերաբերադրման պատմության, նրա պատկերագրությունից դուրս գալու, կամ Վասպուրականում մնալու հարցերը<sup>36:</sup>

32 Այս ձեփ գրակալի նկարագրությունը տես նաև՝ Գ. Լ Առնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1958, էջ 13: Կային նաև երդիկից կախվող քառանկյունի մեջ տախտակից կազմված գրակալներ, որոնց վրայի դասենման հարմարությունից ամրացվում էր մազաղամբը: Տես Մատենագրան, ձեռ. № 1090 (1404 թ.), № 1402 (1402 թ.) և այլիշ օրինակներ:

33 Մի ձևագրի հիշատակարանում գրիշը դժուռում է՝ որ «Զինչ յերդին կու անկանի՝ թափի գիրս և ապատկանել». Ա. Արքահամբան, «Հայ գրի և գրչության պատմություն», Երևան, 1959, էջ 350:

34 Տանիքից իջեցվող անդամաւույժի այսպիսի պատկերման հայկական ձեռագրերում առաջին անդամ հանդիպում ենք Ղարսի (Դադիկ Բագրատունու) ԺԱ. դարի ավելարանում («Արարատ», 1910, էջ 337):

35 Վասպուրականի մանրանկարչության մեջ այս թեմային առաջին անդամ հանդիպում ենք Սիմեոնի ընդօրինակած 1305 թ. ավելարանում (ձեռ. № 2744): Մեզ հասած ավելի վաղ ձեռագրերում (ԺԱ. դար, № 947, ԺԱ. դար, № 3756) զարդարակայում է:

36 Այդ մասին տես Ս. Տեր-Ներսեսյան, «An Armenian Gospel of the Fifteenth Century». Boston, 1959, էջ 6: Անդրագառնալով զոհարերման հարցին, Հեղինակը հնիտագրում է, որ երբ ԽI դարից սկսած թեմատիկ նկարները ձեռագրերի սկզբի թերթերից տե-



Նկ. 2.  
Խառնակի զոհաբերութը

Նշելով, որ Սիմեոնը մեղ հայտնի մանրանկարիչներից առաջինն է, որ անդրագարձել է այդ թեմային, դրանից շնորհ հետեւնում, որ զոհաբերման թեմայի վասպուրականում շարունակվելը կապված է սոսկ այս նկարչի անվան հետ<sup>37</sup>:

Հորինվածքային տեսակետից ուսումնասիրվող աշխատանքը ավելի մոտենում է մեր հին բարձրաբանդակներին (Թալինի Ագիյաման պյուլի կոթողը, Անիի միջնաբերդի բաղիլիկան, Աղթամարի եկեղեցու բարձրաքանդակը), քան Х—ХІ դդ. հայկական ձեռագրերում հանդիպող օրինակներին (Էջմիածնի 989 թ., Երուսաղեմի № 2555, Վիեննայի № 697 ավետարանները): Հուշարձաններից առավել կարևորը Աղթամարինն է, որին համապատասխանում է մեր սխաման, տարբերությամբ, որ ձեռագրում Խաչակի գլխից վեր կա զոհասեղան, իսկ քանդակում այն բացակայում է (հավանաբար տեղի պատճառով): Պարզ է, որ Արճիշեցի նկարիչը հարազատությամբ վերարտադրել է այդ թեմայի իրենց միջավայրում վաղուց տարածում սուսած լուսագույն նմուշներից մեկը: Ըստ որում, Խաչակին զոհելու գիրքը նմանվում է արեկլյան ժողովուրդների կենցաղում հայտնի ստրուկներ սպանելու ձեերին<sup>38</sup>:

Հատուկ խնամք է ցուցաբերված Արքահամի դիմանելարում: Մի պահ գաղարեցնելով ձեռքի մահարեր շարժումը, նա ցավազնորեն երազկոտ հայացքը ուղղել է անսպասելի երեացած տատծո աշխին (նկ. 2): Աշխատանքը ունի լուսավոր վառ գույներ (դեղին, կարմիր, կանաչ, կապույտ) և կատարված է համեմատաբար ազատ ոճով: Վասպուրականի ծաղկողները մի շարք դեմքերուն ուղղակի ընդօրինակել են այս նկարը, և բացի սխամայից կրկնել գույները, գծերը, արտահայտությունները (Մատենադարան, ձեռ. № 2843, էջ 2ա, № 5347, էջ 1ա):

Ինչ վերաբերվում է Սիմեոնի կատարողական արվեստին, ապա պետք է նշել, որ այն ունի մի շարք ուշագրավ յուրահատկություններ: Օրինակ, 1288 թ. ավետարանում ներկերի օգտագործումը սահմանափակվում է սոսկ կոնտուրացին և առանձին մասերի նկարումով, այսինքն՝ հարթությունները մնում են դատարկ: Թղթի մաքրության վրա տարրեր գույներով գծանկարված են մարմիններին ու առարկաները: Դա աշխատելու եղանակ է, ոճային ուրույն սկզբունք:

Դափոխմեցին՝ տեղատերի մեջ, ապա զոհաբերման թեժուն գույն մնաց նկարազարդումների ցանկից: Վերջինս կրկին դրամից իր նախկին տեղը, երբ XIV դարում նկարները նորից հավաքվեցին սկզբի թերթերում: Այս միտքը հեղինակն արժարծում է նաև վերցերս Չետարակությունում, Dublin, 1958, էջ XXXIII: I. Ա. Գուր'յանը, Վանի դպրոցների պահերազական առանձնահատկությունները կազում է անգական ընդհանուր պայմանների ու հին սովորությունների հետ (առև «Կրաtkая История Древнеармянской живописи», Ереван, 1957, էջ 46):

<sup>37</sup> Մեկ նկարչի կողմից առաջ քաշված որմէ թեմա (երբ այն գույն է բնդշանուր պատկերությունից) շեր կարող մեխանիկորեն կրկնվել կամ ընդունվել տարրեր կենտրոններում: Բացի այդ, միջնադարյան կրոնական սխոլաստիկայի պայմաններում, սովորական մահկանացուն, ինչպիսին «անպիտան» ծաղկողն կարող էր լինել, ի վիճակի շեր ինքնակամ կերպով լուծելու (հանելու կամ մաղնելու), պատկերադրական սկզբունքային որմէ: Հարցւ: Այդ ժամանակ շատեղծագործական ակադր.— գրում է Վ. Լազարեր, — կրում էր միանդամայն անդեմ ընույթ («История Византийской живописи», Москва, 1947, էջ 17—18): Նկարիչները մեծ ժամանք կատարում էին պատվիրատուի ցանկությունները:

<sup>38</sup> М. Матье и К. Ляпунова, «Художественные ткани Коптского Египта», Москва, 1951, տախտակ XXV:

իր լրիվ ավարտվածությամբ։ Այս ձեզ հարգի է եղել նաև կիլիկյան վարպետների մոտ, որոնք սովորական շերտային գունանկարների հետ անդրադարձել են նաև դունագծման հիշյալ մեթոդին (տե՛ս, օրինակ, Մատենադարանի Զեռ. №№ 180 և 345; Ավելի շատ են երկու կամ երեք ներկերով կատարված գծանկարները, տես № № 4301, 3528, 142 ձեռադրերը): Վասպուրականում այս տեսակետից Սիմեոնը շատ հաջորդներ ունեցավ, որոնցից են՝ Հովհաննես (ձեռ. № 2829), Զաքարիա (ձեռ. № № 5332, 2843), Դանիել (ձեռ. № 5512) ծաղկողները։ Նման աշխատանքների դեղաբվեստական արժեքի համար մեծ նշանակություն ունի մարմնի համամասնությունների ճիշտ պահպանումը և գծային պլաստիկան, որոնց մեր հեղինակը տիրապետում է վարպետությամբ։ Նույնիսկ կատարման այդ ձևին բնորոշ գրաֆիկական շրությունը այստեղ կարծեք կորչում է կատարյալ ձևուն ու նբրորեն արտահայտված եղբադերի ու հաղուստի ծալքերի մեջ։

1288 թ. ձեռագրի նկարագրումներից հետո Սիմեոնն այլև շանդրադաւկ հիշյալ եղանակին։

Հայ նկարիչները սիրել են մաքուր և ուժեղ գույններ՝ միաժամանակ պահպանելով ներդաշնակությունը։ Դա կապված է գույնների զգացողության, ճիշտ ընտրության և նրանց քանակի որոշումից։ Այս առումով օրինակելի է Աստվածամոր դիմանկարը 1297 թվականին ընդօրինակված ձեռադրում (№ 4867, էջ 14ր): Չեզ վրա նայող գեռաւոր կինը թվում է թե նոր է որդուն վերցրել զիրկը ու մայրական բնազդով ձեռքը զեռ չի հեռացրել երեխայից։ Թափանցիկության շափ նուրբ գլխաշորը, ծածկելով երիտասարդ մոր ուսերը, սահուն իշնում է ցած՝ առջեռում կաղմելով ծալքերի մկրատածե դաստիքություն։ Նրա անթարթ, իմաստալից աշքերը դիտողին դամում են իրենց վրա։ Տպավորությանը ներդաշնակում է մեղմ կոլորիտը, որը ստեղծված է բաց շագանակագույնի, վարդագույնի, բաց կտորույտի համակցությամբ։ Նկարիչը չի տարվել առանձին մանր դրվագների մշակմամբ՝ աշխատելով շինախտել ընդհանուր ձևերի ամրող-ցությունը<sup>39</sup>։

Արճիշեցու, ինչպես և Վասպուրականի, այլ ծաղկողների մոտ մարմինները, անկախ դրվագ դույններից, եղանակություն են նաև մուգ շագանակագույնով։ Մավալի ու խորության արտահայտման դլխալոր միջոցը մնում է դիմք, որը այս դպրոցի համար դարձաւ բնորոշ առանձնահատկություն։ Դա ինչ որ չափով շրություն է հաղորդում նկարին, սակայն այստեղ նյութային զգացողության հատկանիշները լրիվ չեն կորչում։ Ուստի և Արճիշեցու աշխատանքներում նկատվում է ոճական երկակիություն, մի կողմէից գրաֆիկա — ակվարելայի։ Հակումները դրանք մոտեցնում են XI—XII դարերի նկարագարդ ձեռադրերին, մյուս կողմէից, նկատելի է XIII դարի, հատկապես կիլիկյան մանրանկարչության նվաճումների օգտագործումը (լույս ու ստվերի, ծավալի, կոմպոզիցիաների գեղանկարչական լուծումներ)։ Սիմեոնը կարողացել է դանել յուրօրինակ հավասարակշռություն՝ գծապատկերային դեկորատիվ էֆեկտիվության և առարկաների ծավալային զգացման միջև։ Այս դեպքում կարծեք ավելի անմիշական և ուժեղ է արտահայտվում հոգերանական կողմը, կերպարների ներք-

39 Պատմության թանգարանում Գ. Հովսեփյանի արխիվային սեանկարները ուսումնասիրելու ժամանակ մենք գտանք այս մանրանկարի սեանկար աղակին՝ 18×24 մեծությամբ։ Մրարի վրա մակադրված էր «Հետաքրքիր»։ Գ. Հովսեփյանը հավանաբար ժամանակ շունչցավ անդրադանալու արդ աշխատանքներին։



Նկ. 3.  
Ազետառական

նաշխարհը (տես «Ավետոսմբ» № 2744 ձեռագրի 2ա էջում. նկ. 3): Անհուն անմեղությամբ լի Մարիամը ունկնդրում է հրեշտակին, որը բնքորեն ու հանդիսած մոտեցել է կույսին ուրախ լուրը հաղորդելու: Մարիամի աշքերը արտահայտում են նրա հոգու անսպաս հարստությունն ու թուլանքը. միայն մեծ սեր ու վիշտ տեսած նկարիչը կարող է այդպիս զգալ մարդկային ուրախության հուզմունքն ու թարնուած տափնապը:

Սիմեոնը պրալառով, մնարող նկարիչ է: Թեմաների ու մանրանկարչությանը հատուկ սեղմ շրչանակներում էլ նա դանում է գեղարվեստական հետաքրքիր ձևեր: Բնորոշ է «Մկրտությունը» (էջ 4ա). լայն դետի ափին կանգնել է Հովհաննեսը և մկրտում է զրի մեջ քոնվող Հիսուսին: Վերեկց, դեպի աստծո որդին է սլանում ու Հոգին աղաւնու կերպարանքով<sup>40</sup>: Ուշադրավը Հիսուսի հագուստները պահող հրեշտակներն են. մեղ հայտնի բոլոր դեպքերում դրանք կանգնած են դետի ափին, իսկ այստեղ ձախրում են օդում: Այս լուրնատիպ լուծումը նկարչի գեղեցիկ մտահղացման արդյունքն է:

Սիմեոնը գունեղության է հասնում երբեմն մի քանի ներկերի (կապույտ, շագանակագույն, կարմիր) ճիշտ համադրման ու դրանց երանգների միջոցով: Ներկանակի բոլոր հնարավորությունները չեն դատարկում հանդիպող էջում. նա դուստ է և շափավոր: Բայց նկատելի է նրա հակվածությունը շագանակագույն երանգի և հատկապի կապույտի նկատմամբ, որին նախապատվություն է արվում ամենուր<sup>41</sup>: Արճիշեցու, որպես ստեղծագործողի, ամենաբնորոշ կողմերից մեկը նրա հորինվածքների կուռ և գեղեցիկ դրամագործած ձեռն է: Եթե Աղթամարի նկարիչները պատկերվող մարդկանց փոխհարերությունները հասկացնելու համար դիմում են շեշտված, բայց հասկանալի շարժումների (ժեստերի) միջոցին, ապա Սիմեոնի մոտ ֆիգուրների խելացի դասավորումը արդեն հուշում է զործողության իմաստը (տես նրա «Մատոնություն», «Հիսուսը Պիղատոսի մոտ», «Հիվանդների բուժումը» մանրանկարները):

Մեր հեղինակը տուրք է տվել նաև սիմվոլիկ-պայմանական ձևերին: Հայոնի է, որ խորհրդանիշները տարածված են եղել վաղ քրիստոնեական շրջանում: Քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո բյուզանդական ճոխ արվեստը ասպարեզից դուրս մղեց այդ, այսպիս կոչված՝ ոչ գեղանկարչական մոտիվները: Այսուամենայնիվ, արհելլան հողում սիմվոլիկան շանհայտացավ, թեև զգալիորեն փոխեց իր էությունը: Նախկին փոխարերական իմաստ արտահայտելուց բացի, այն միջնադարում ավելի շատ ծառայում է պատկերների լակոնիկությամբ: Օրինակ՝ Հիսուսի տանջանքների տեսարանում (էջ 5ա), նկարիչը փշե պսակը չի հագցրել նրա զիմին ըստ ավետարանի<sup>42</sup>, այլ առանձին նկարել է կոմպոզիցիայի կինտրոնում, արտահայտելով շարշարանքի և նահատակության բնդւանուր իմաստը: Նույն բնդւյթն ունի տաճարանման փոքրիկ կառույցը ավետման տեսարանում: Այդ մակետն էլ բավական է

40 Ն. Կոնդակովը մկրտության ժամանակ դեպի Հիսուսը իշնող աղավնու առկարությունը համարում է Սիրիա-պաղեստինական պատկերագրական ձեւ («Археологическое путешествие по Сирии и Палестине», СПБ, 1904, էջ 40).

41 Կապույտը արագիցին կնրառվ գերիշխող է եղել X—XII դարերի ձեռագրերում (տես Մատենադարանի № № 2877, 7700, 2743 ձեռագրերը, Անդի որմեանկարները և այլն): Այն նախապատվելի է համարվել նաև կիլիկյան վարպետների կողմից:

42 Ավետարան Մատթեոսի, իե., 29:



Ես առաջ առ առ ապօպաւած առ առ ապօպաւած  
Ես առ ապօպաւած առ առ ապօպաւած եք ի վեհական  
ա ապօպաւած ի վեհական ապօպաւած».

Նկ. 4.  
Հազար դաւանամի

կուահելու համար, որ գործողությունը ընթանում է տաճարի ներսում<sup>43</sup>: Ընդհանուր այս ձևերը տեսնում ենք նույնությամբ Աղթամարցի նկարիչներ Զաքարիայի (գործել է 1354—1403 թթ.), Դանիելի (1403—1426) և Գրիգորի (1444—1463) աշխատանքներում<sup>44</sup>:

Յուրատիալ լուծում ունի Սիմեոնի «Հոգեղալստյան» կոմպոզիցիան, որը պատկերագրական նորություն է հայ մանրանկարչության մեջ (նկ. 4): Ի տարրերություն մյուս թեմաների, որոնք հորինվածքային առումով տրված են կոնկրետ իրադրության մեջ, օրինակ՝ մկրտությունը դիտում, Տեառնընդառաջը՝ տաճարում, Ա. Հոգու գալուստը այստեղ տեղի է ունենում ոչ միանդամայն ունալմեկնարանված շրջապատում: Հեղինակը նովատակ է ունեցել արտահայտել երևոյթի միայն իմաստը, այլ ոչ արտաքին միջավայրը<sup>45</sup>:

Ավետարանիչները նստած ձևերով են, շարժումներում բավականին աղատ, առանց էմոցիոնալ լարվածության: Հետաքրքրություն է առաջացնում Հովհան ավետարանիչի դիմանկարը (նկ. 5): Երկու ձեռքերը դրած գավազանի վրա, նաթելադրում է ավետարանական նյութը իր Պրոխոր աշակերտին: Վերջինս միջին տարիքի սև բեզ ու մորուքով տղամարդ է<sup>46</sup>: Ստուգումները ցույց տվեցին, որ Վասպուրականում այս պարու տեսարանի<sup>47</sup> պատկերագրական յուրատիպությունը մեզ հասած ձեռագրերի մեջ առաջին անգամ տեղ է գտել Սիմեոն Արճիշեցու 1288, 1297 և 1305 թթ. ընդօրինակած ավետարաններում, ինչպես նաև Տուրուբերանում 1294. Բվականին ընդօրինակված ավետարանում (ձեռ. № 4814)<sup>48</sup>:

Ավելի ուշ, Վասպուրականի մանրանկարչության մեջ ընդհուպ մինչև XV դ. կեսերը այդ ձեր մասնակի բացառություններով անվերապահ ընդունելությունը դուավակ:

Դժբախտաբար նյութերի պակասը հնարավորություն չի տալիս որոշելու,

<sup>43</sup> Այսուղ պատկերված է փոքր տաճար: Մեզ հայտնի է նույն, որ այդ գեղքերում լինում են նաև գահաթեթուններ, ինչպես կոնդակովն է նշում (Ա. Կոնդակով, История. Виз. искусства и иконографии по миниатюрам. Одесса, 1876, էջ 64): Սիմվոլիկ-պայմանական ձեռքերական ձեռագրերում համարյա միշտ էլ օգտագործվել են:

<sup>44</sup> Սրանց ստեղծագործությունները պահպանվել են Մատենադարանի № № 2843, 4915, 5512 ձեռագրերում:

<sup>45</sup> Հովհան ձեռագրերի մեջ հանդիպում ենք ու Հոգու գալուստի նման բնույթի լուծման, բայց արտաքին ձեռքում միանդամայն տարրեր (տես Հ. Վ. Պոկровский, «Очерки памятников Христианского искусства и иконографии», Петербург, 1910, էջ 153):

Իշարեն, Սիմեոնի օրինակի և մեր ազգային սովորությային օրինակների միջև նմանաթյան նշանը կան: Հիշենք Աւաքելոց եկեղեցու նշանավոր դուռը, որի վրա քանդակված է նույն թեման: Հետագայում մի շաբթ նկարիչներ ճշտությամբ ընդօրինակել են Սիմեոնից (Զաքարիա, Դանիել):

<sup>46</sup> Սովորաբար, սկսած վաղքրիստոնեական շրջանից Պրոխորը պատկերվել է որպես պատանի, առանց բեզ ու մորուքի: Հայկական ապոկրիֆներից մեկում (Ստուգություն Եвангelista Ioana Bogoslava, Москва, 1876, էջ 45) նկարագրվում է, որ Հովհանը ավետարանական տերսոր Պրոխորին թելագրել է եփեսոսում արսորված լինելու ժամանակ, երբ Պրոխորը շուրջ 35 տարեկան պետք է լիներ: Քուցե վերը նշված նոր սինմայի հեղինակները օգտագործել են այս աղբյուրը:

<sup>47</sup> Բայտ որում, այդուղ բացակայում է աստված, կամ դա հիշեցնող որևէ բան, որոնք հանդես են գալիս Հովհանին ներշնչողների դերով:

<sup>48</sup> Գլածորի մանրանկարիչներից Մոմիկը իր 1292 թ. ընդօրինակած ավետարանում նույնպես Պրոխորին նկարել է բեզ ու մորուքով:



Հայոց պատմութեան և առաջարկութեան  
Հ. 5.

թե երբ և որտեղ է խմբագրվել այս օրինակը: Ենթադրում ենք, որ XIII դարի կեսերին Հայաստանի հարավային շրջաններում զա արդեն տարածված է եղել՝ գուցե տեղի նկարիչներին հայտնի էր անվավեր զրականության որևէ բնագիր, ըստ որի նրանք և աշխատել են պատկերել այդ թեման: Գույները այսահեղ շատ շեն. բաց շագանակագույն թիկնոցի հետ տեսնում ենք կապույտ ներքնազգեստ, կանաչի հետ՝ կարմիր և համապատասխան կրկնություններով:


Հնուագրքիր է Արճիշեցու մոտեցումը տարրեր գիմանկարներին: Մի դեպքում նա աշխատում է մեկ ընդունված պայմանական կանոնով, պատկերում է միաձև ալեհեր ծերունիներ — Մաթևոս, Հովհաննես, Արքահամ, Սիմեոն, մյուս դեպքում՝ միջին տարիքի տղամարդիկ, սև բեզ ու մորուքով — Մարկոս, Ղուկաս, Պրոփոր և մի քանի առաքյալներ: Արանց մաս նույնիսկ աննշան թվացող պծերը կատարված են միանման: Ըստ որում, գիմաձևների այդ սխեմաները պահպանվեցին Վասպուրականում Սիմեոնին հաջորդող մի շարք նկարիչների մոտ (նրանց գործերը տես № № 4817, 4125, 7456, 5332 ձևագրերում): Բայց Սիմեոնը միշտ չէ օգտվում պատրաստի տրաֆարետային նմուշներից. մի շարք գործող անձեր նրա մոտ, հատկապես կենցաղագրական մանրամասներ ունեցող մանրանկարներում ունեն դիմային ուրույն անհատականություն: Դրանք այնքան համոզիլ են ու անմիջական, որ կարծեք նկարիչը բնորդներ է օգտագործել: Կատարողական տեսակետից ևս դրանք առավել հաջող են արված (տես, օրինակ, նկ. 1): Այստեղ եղբագժերը անցնում են խիստ ճկուն, շեշտված կամ աննկատելի թույլ, նկարիչներին՝ կենդանություն, մարմինների՝ բնական ձև ու փափկություն հաղորդելով:

Սակայն նույնը չի կարելի ասել տրաֆարետային բնույթ ունեցող կանոնական ախորածների. կապակցությամբ: Արանք պատկերված են մահի ու արյունից զորի, սառն ու միապազրի:

Վասպուրականի ձեռագրերի մանրանկարներում հետին սլանը չի ընդգծվել. նկարիչները պատկերել են միայն տվյալ թիմայի գլխավոր անձանց և ամենաանհրաժեշտ առարկաները: Այդպես է վարվում և մեջ հեղինակը, որի մոտ կոնկրետ շրջապատի ու բնության տեսարանները դորս են մնում Հետոքրոթյան շրջանակներից: Զկա նույնիսկ այն հարթ տարածությունը, որի վրա պետք է կանգնեն մարդիկ, չկա հեռանկար: Յայտում մեկնարանված մարմինները ուղղակի դասավորվում են մի շարքում (երբեմն անկանոն կերպով, ինչպես Հրաշագործությունների տեսարանում): Այս դեպքում թղթի մաքուր ֆոնը շեշտում է պատկերների ստվերագծանությունը, իրենց պարզորոշ ուժեղ գույններով<sup>49</sup>, իսկ ծավալի բացակայության դեպքում՝ զա նկարին հաղորդում է դեկորատիվ հատկություն: Ե դեպ, վերջինս մեծ շափերի հասավ Սիմեոնին հաջորդած նկարիչների մոտ, որոնց գործերում բացարձակ անծավալայնությունը զուգորդվում է վառ և ուժեղ գույնների հետ (Կիրակոս, Շերուն, Դանիել, Վատվածատուր)

Գլխավոր կերպարը առանձնացնելու համար Սիմեոնը այն տեղադրում է

<sup>49</sup> Նախքան Սիմեոնը Վասպուրականում բնդօրինակված մի քանի ձեռագրերի մեջ ֆոնը նույնպես չի նկարվել (տես, օրինակ, Ժ. դարի № 974 և Ժ. դարի № 3756 ձեռագրերը): Այս նույն մեթոդով են աշխատել նաև արար նկարիչները: (Տես Բ. Վ. մար. Տ. Կոլտերե-վա, Ա. Պոծոլսկի, Խոսկության արար նկարիչները, Տես Բ. Վ. մար. Տ. Կոլտերե-վա, Ա. Պոծոլսկի, Խոսկության արար նկարիչները, Մոսկվա, 1960. Վաշինգտոնի աշխատավայր, տ. II, ք. 2, 1961).



Հորինվածքի կենտրոնում, երբեմն պայմանականորեն տվելի նկատելի համաշափոթյուններով, ինչպիսին Հիսուսը Հիվանդներին բուժելու «Մատնության» տեսարաններում, Մարիամը «Համբարձման» տեսարանում և այլն։ Որպես կանոն, բոլոր նկարները ամփոփվում են դեղին նուրբ շրջանակների մեջ, ավետարանիշների նկարներում վերին անկյունների տակ գտնվում են դեկորատիվ դեղեցիկ հատվածներ՝ ներսից գոգավոր եզրագծերով (նկ. 5):

Բայ սովորութիւն՝ խորանները տասը հատ են, ներառյալ Եվսերիոսի ողջույնը։ 1288 թ. ձեռագրում դրանք եզրափակվում են երեք սյուների վրա հանգչող կամարներով։ Խոյակները տերեածեւ մոտիվներ են, իսկ խարիսխները ընդհանրապես շկան։ Հնավանդ պարզ կամարները, որոնք XI դարից հետո անհետացել էին մեծ ու բազմագույն քառանկյունիների մեջ, այժմ, մասնավորապես 1288 թ. ձեռագրում, նորից ցուցադրում են իրենց հաճելի պլաստիկան ու նուրբ դժերը (նկ. 6)։ Լոկալ ու ակվարելային գույներով, բազմատեսակ ու շքեց էլեմենտներից զուրկ այդ խորանները կապվում են մեր վաղ շրջանի նկարագրումների հետ (տես Մատենադարանի № 6201 ավետարանը, ընդօրինակված 1038 թ.), այն տարրերությամբ, որ նրանցում ճարտարապետական իմաստը որոշակի էր և չէր կորցրել իր երեսնի նշանակությունը, իսկ Սիմեոնի մոտայն ամբողջովին ենթարկված է պրբի գեղարվեստական նկարագրումանը։

1305 թ. ձեռագրում կամարները ձուլվում են քառանկյունների մեջ<sup>50</sup>, վերջիններիս միատոն գույնի վրա (կապույտ կամ բաց կանաչ) արմավենու ոճավորված տերեազարդեր են, մեր նկարչի սիրած մոտիվը<sup>51</sup>։ Հանդիպում ենք նաև դեղեցիկ ծառանյուղերի, որոնք համաշափորնն ձգվում են դուրս։ Խոյակներն ու խարիսխները պարզ աստիճաններ են։

Վերջին գույգ խորաններում պլխամասերի փարթամ տերեածերը, իրենց կանթեղանման վերջավորության մեջ ամփոփում են հյուսածո մեծ խաշեր<sup>52</sup>։ Գույները այստեղ, ավելի քան թեմատիկ նկարներում, ակվարելային են։ Չնայած դրանց սահմանափակ քանակին, այնուամենայնիվ շատ հաճելի է ընդհանուր գունեղությունը։ մանավանդ կապույտ և սպիտակ համընթաց շերտերը։

Խորանների հարդարանքը ավարտվում է թուշունների խիստ ինքնատիպ պատկերներով (սիրամարդ, ձկնկուլ, աքաղաղ, լորիկ)։ Սրանց գույների ընտրության մեջ հեղինակը ելնում է ողջ էջի ձեւավորման նպատակահարմարությունից և համառու վառ, ուրախ գամմայի ստեղծման (իշխող կապույտ կամ դեղին երանգներով)։ Թուշունների նկարման այս հետաքրքիր պրիունները, նույնիսկ գունային կրկնությամբ, շարունակվեցին Վասպուրականի դրեթե բոլոր կենտրոններում։ Նշենք ի վերջո, որ Սիմեոն Արմիշեցու աշխատանքներով արմատավորվեցին խորանների նկարագրացին-դեկորատիվ ստարդ ձևերը, որոնք մի առանձին խումբ կազմեցին հայ մանրանկարչության մեջ։

<sup>50</sup> Վերին անկյուններում կան հաստերեկիներ։ Դա հնուց եկող արևելյան սովորույթ է, որը շատ ավելի վաղ տարածված է եղել պարսկերին ձեռագրերում (Ն. Ա. կ. ի ն յ ա ն, Սկեռայի աւետարանը 1197 թ., Լվովի հայ արքեպիսկոպոսարանի պրադարանին մեջ, Կիեվնա, 1930, էջ 16):

<sup>51</sup> Արմավենու ոճավորված տերեսները որպես զարդամոտիվ հնուց (Սասանյան շրջանից) օգտագործվել են մեր վարչականների կողմից և ընդունվել որպես դարդերի ազդային ձև (Ս տ ր ժ ի դ ո վ ո կ ի, էջմիածնի ավետարանը, 1892, էջ 77—78):

<sup>52</sup> Զեր տեսակետից այս խաչը նմանվում է ԺԱ. ԺԱ. դարերի հայկական խաչարերին։ Նույն տիպի խաչեր կան նկարված Մատենադարանի № 7435 (986 թ.) և № 283 (1033 թ.) ձեռագրերում։

Արճիշեցու բոլոր ձեռագրերում անվանաթերթերը միանման են (բացառությամբ դժային բնույթով կատարված 1288 թվականի № 4851 ավետարանի): Քառանկյունների ստորին մասերում նրանք ունեն գմբեթածե կորվածք, իսկ եզրերից շրջագծիված են կարմիր ժապավենածե շերտով: Միակ զարդամոտիվը, ինչպես խորաններում, այնպես էլ այստեղ արմավենու նուրբ կապույտ տերենքն են, անկյուններում ավետարանիշների համապատասխան խորհրդանիշներով — մարդ, արծիվ, առյուծ և եղ: Օպտագործված լազուր կանաչը, ֆոն ծառայող ոսկու և թափշյա կապույտի հետ առաջացնում է արտակարգ գունեղ և տոնական տպավորություն, թեև այդշափ շրեղություն հատուկ չէ Սիմեոնին: Համանարար սկզբնաթերթերի նախատիպը նա ընտրել է կիլիկյան ձեռագրերից, քանի որ բացի շրեղությունից, այստեղ ճշտությամբ համապատասխանում են նաև սխեմաները, այն տարրերությամբ, որ ներկա օրինակում (նկ. 5) դրանք մոնումենտալ են և քիչ ավելի պարզեցված<sup>53</sup>:

Գեղեցիկ սկզբնատառերը կազմված են մեկ կամ մի քանի կենդանիների ու թոշունների բնական շարժումների միջոցով: Մատթեոսի ավետարանի առաջին «Գօ-ն», օրինակ, մի ոլատկեր է, որի աջ ձեռքը տերեազարդի հետ կազմում է տասի վերին շրջանակը, մյուսը՝ միջին ելուստի դեր է կատարում: Դուկասի «Բօ-ն» ներկայացնում է եղ, զլխին կորացած թոշունով<sup>54</sup>: Հովհաննի մոտ՝ արծիվն է ձկան համակցությամբ (նկ. 5):

Սկզբնաթերթերի խոշոր լուսանցաղարդերը ձգվում են էջի բարձրությամբ: Դրանք ականթի տերևներից են և ունեն կարմիր, կանաչ, կապույտ երանգներ, երբեմն ոսկու նուրբ քանակով<sup>55</sup>: Վերջինս օպտագործվում է նաև ավետարանիշների լուսաղսակներում:

Տերստերի մեջ բազմաթիվ են փոքր լուսանցաղարդերը, որոնք աշքի են ընկինում գեղարվեստական միջոցների պարզությամբ: Մեկ կամ երկու լայն տերևների հետ միացվող շաղանակագույն գծիված շրջանակները իրենց մեջ տե-

53 Վերանայման կարիք ունի դրականության մեջ տարածված այն կարծիքը, որի համաձայն վասպուրականի ձանրանկարչությունը կտրված է եղել մյուս զպրոցներից ու արտաքին աշխարհից (Свирин А. Н. Миниатюра древней Армении, Москва, 1939, էջ 107 և 116; Лазарев В. И. История Византийской живописи, Москва, 1947, т. I, էջ 251): Կան վաստեր այն մասին, որ Վասպուրականում ընդօրինակություններ են կատարվել կիլիկյան ձեռագրերից, օրինակ 1272 թ. Կեռան թագուհու ավետարանից (S. Der Nersessian. The Chester Beatty Library: A Catalogue of the Armenian Manuscripts. Dublin, 1958, էջ XXXIX): Համոզիչ վկայություններ են նաև Սիմեոնի ձեռագրերում հանդիպող անգամաթերթերը, խոշոր լուսանցաղարդերը և ավետարանիշների զիմանկարները (Մարկոս, Ղուկաս): Համեմատությունները հաստատում են այս կարծիքը: Անգամ զույները ճշտությամբ պահպանվել են: Նույնը վերաբերվում է նաև խոշոր լուսանցաղարդերին ու կենացանգըներին (թեպետ այսուղ փոփոխություններն ավելի ակնառու են): Համեմատությունների համար ուշադրավ է կիլիկիայում, 1283 թ. նկարագրությամբ Ապամոսարանը («Հանդես ամսորեայ», 1922 թ., էջ 143—151, պատկերներ 2, 3, 4, 5, 6, 7): Կիլիկիայի միջոցով հունական սովորություններից է փոխ առնված նաև այն փոքրիկ խաչերի օպտագործումը, որը նկարված են Մարիամի դիմին (Ծնունդ, Երկրագում, Համբարձում, և այլն):

54 Նույն տառածներին հանդիպում ենք նաև կիլիկյան ձեռագրերում:

55 Փարթամ տերեաղարդերը և մաքուր, վառ գույները հիշեցնում են ԺԹ դարի № 2877 և 1205 թ. Մշո Ճառանտիրի նկարագրումները, այն տարրերությամբ, որ Սիմեոնի մոտ դրանք բավարար մշակման են նեթարկված:

զավորում են առանձին սկզբնատառեր<sup>56</sup>: Լուսանցքներում հանդիպում ենք նաև սիրենների (կնոջ պլուխներով թոշուններ), կենդանիների, ծաղիկների. դրանց արտակարգ վարժ կատարումը հիացմունք է առաջացնում: Բայ որում, նշված մոտիվները մեծ նմանություն ունեն կիլիկյան մի քանի ձեռագրերի նկարագրումներին (օրինակ՝ 1283 թ. ընդօրինակված Սաղմոսարանին):

Այս համառոտ հաղորդումը հեռու է Սիմեոն Արմիշեցու ստեղծագործությունների ամբողջական պատկերը տակոց: Այստեղ լոկ մի փորձ է արվում համառոտակի ծանոթացնելու արվեստարաններին նրա արժեքավոր ժառանգության հետ, ամենասեղմ շրջանակներում: Բայց այժմ էլ կարող ենք տսել, որ Սիմեոնը իր գործերով ու ստեղծած ոճով հանդիսացավ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի առաջին և ամենախոշոր դեմքը: Նա ունեցավ հետեւյորդներ, ստեղծեց իր ուղղությունը: Նրա աշխատանքների մանրակնին ուսումնասիրությունը միշնադարյան հայ արվեստի ֆոնի վրա, սպառիլ կերպով կրնությունի այս նշանավոր նկարչի դեմք մեր արվեստի պատմության մեջ:

Г. Г. АКОПЯН

## СИМЕОН АРЧИШЕЦИ—ПРЕДСТАВИТЕЛЬ РАННЕГО ПЕРИОДА ВАСПУРАКАНСКОЙ ШКОЛЫ МИНИАТЮРЫ

### (Р е з ю м е)

Васпураканская школа является одной из самых интересных и, вместе с тем, наименее изученных ветвей в истории армянского средневекового искусства миниатюры. Старинные армянские национальные обычаи и мотивы нигде не проявились так щедро и ярко, как здесь.

Одним из первых представителей Васпураканской школы миниатюры явился мастер Симеон—один из крупнейших миниатюристов средневековой Армении. Симеон жил на рубеже XIII и XIV веков в городе Арчеше. До нас дошли 4 рукописи, украшенные его рукою в 1288—1305 годах; ныне они хранятся в Ереванском Матенадаране. До последнего времени принято было относить возникновение Васпураканской школы к 30—40 годам XIV века, однако работы художника Симеона говорят о том, что дату возникновения этой школы следует отнести на полвека назад, к 80-м годам XIII века. Работы Симеона замечательны своими светскими мотивами и жанровыми сценами. Особенного внимания заслуживают, первые в армянской живописи, изображения известных в средневековом быту «дзайнарку-гусанов» и женщин-плакальщиц. Большой интерес представляют также изображения предметов домашнего обихода, одежды и орудий производства. Художнику Симеону принадлежит

<sup>56</sup> Լուսանցադարդների հիշյալ ձեռք (գլխատաները շրջափակող շրջագծեր, որոնցից դուրս են գալիք տերեագարդներ), Ստանով համարում է փոխանման սիրիական ձեռքից (Վ. В. Стасов, Армянские рукописи и их орнаментация, „Журнал Министерства Народного просвещения“, 1886, Петербург).

наиболее раннее изображение висячих досок (передвижных столов), на которых работали армянские писцы и миниатюристы.

С именем Симеона связаны также некоторые нововведения в области иконографии. Так, например, известная сцена жертвоприношения Авраама, которая не встречалась с XII века, вновь вводится в армянскую миниатюру Симеоном. Миниатюрист Симеон заложил также основу характерному стилю, который резко выделяет Васпураканскую школу миниатюры, а именно: чистые, яркие краски, графичность, линейный стиль, отсутствие фона. В Васпураканской школе Симеон—непревзойденный мастер монументального стиля, оказавший несомненное влияние на ее последующее развитие.

Н. Н. НАКОВЯН

### SIMEON ARTCHICHETSI, REPRESENTANT DE LA PERIODE ANCIENNE DE L'ECOLE DE MINIATURE DE VASPOURAKAN

L'école de Vaspourakan est, l'une des plus intéressantes et aussi des moins étudiées dans l'histoire de la miniature arménienne. Les motifs nationaux et les vieilles traditions de l'Arménie y trouvèrent comme nulle part ailleurs une source d'expression à la fois riche et claire. Un de ses premiers représentants le célèbre maître Siméon, fut un des grands miniaturistes arméniens du moyen âge. Siméon vécut à la fin du XIII<sup>e</sup> et au début du XIV<sup>e</sup> siècle, à Artchèche. Nous lui connaissons 4 manuscrits enluminés de sa propre main en 1288—1305 et qui se trouvent aujourd'hui au Maténadaran. On pensait, jusqu'à présent, que l'école de Vaspourakan s'était constituée dans les années 30—40 du XIV<sup>e</sup> siècle, cependant que les œuvres de Siméon nous font reporter cette date d'un demi-siècle en arrière, aux années 80 du XIII<sup>e</sup> siècle. Les œuvres de Siméon sont remarquables par leurs motifs profanes et les scènes de genre. Sont particulièrement dignes d'attention les figures des „tsainarkou koussans“ et des pleureuses, personnages typiques du moyen âge. Les objets usuels, habits, instruments de travail qu'on voit représentés sont également intéressants. Le premier, Siméon a introduit dans la miniature les pupitres sur lesquels travaillaient les copistes et les miniaturistes arméniens. Certaines innovations dans l'art iconographique se rattachent de même au nom de Siméon. Ainsi, on lui doit d'avoir repris la fameuse scène du sacrifice d'Abraham qui ne figurait plus dans la miniature arménienne depuis le XII<sup>e</sup> siècle. C'est encore Siméon qui posa les fondements d'un style dans lequel l'école de Vaspourakan devait se distinguer: gamme de couleurs pures et vives, dessin stylisé, absence de fond... Maître inégalé du style monumental, son rôle fut énorme dans le développement de l'école de Vaspourakan.